# ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԻԱ

*Սկիզբը՝ էջ 1-ում*

Արտահայտելով իր երախտագիտությունը՝ Վեհափառ Հայրապետը վերհիշեց ուսանողական տարիները քոլեջում, որի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաջին ուսանողը դարձավ 40 տարի առաջ:

Օքսֆորդի համալսարանի կարեւորագույն կրոնական հաստատություններից մեկում՝ «Pussey House»-ում, ուր կենտրոնացված են կրոնաաստվածաբանական հազարավոր հրատարակություններ, Վեհափառ Հայրապետին դիմավորեցին հաստատության տնօրեն հոգշ. Ֆիլիպ Ուրսելը, հաստատության աշխատակիցներ, ուսանողներ: Աղոթքի կարճ արարողությունից հետո, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, գրադարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը այցելեց համալսարանի ամենամեծ՝ Bodleian Library, գրադարանը, որտեղ կազմակերպված էր հայկական ձեռագրերի ցուցադրություն: Վեհափառ Հայրապետը գրադարանին նվիրեց Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագրի վերջին երկու տարիների հավաքածուն: Bodleian Library-ի տնօրինությունը դիմեց Վեհափառ Հայրապետին՝ Մայր Աթոռի այլ հրատարակություններից գրադարանին տրամադրելու խնդրանքով:

Ի պատիվ Վեհափառ Հայրապետի՝ համալսարանի տնօրինությունը պաշտոնական ընդունելություն-ճաշկերույթ էր կազմակերպել «Balliol. College»-ում, որտեղ ողջույնի խոսքով հանդես եկավ քոլեջի փոխտնօրեն դոկտ. Քոլին Լուկասը:

Օրվա երկրորդ կեսին Վեհափառ Հայրապետը այցելեց նաեւ Անգլիկան Եկեղեցու աստվածաբանական երկու քոլեջներ՝ St. Stephen's House եւ Wycllffe Hall, ծանոթացավ դրանց ուսումնական ծրագրերի հետ:

Վեհափառի այցելությունն Օքսֆորդ ավարտվեց հռչակավոր «Blackwell» գրախանութում, ուր նա ծանոթացավ կրոնաաստվածաբանական վերջին հրատարակությունների հետ:

## ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՇՆՈՐՀՎԵՑ «ԼԱՄԲԵԹԻ ԽԱՉ» ՇՔԱՆՇԱՆԸ

Ննջեցելոց հիշատակի կիրակի՝ նոյեմբերի 9-ին, առավոտյան, Անգլիկան Եկեղեցու հոգեւոր կենտրոնում՝ Քենթրբերիի Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետը Անգլիկան Եկեղեցու պետ գերշ. Տ. Ջորջ Քերի արքեպիսկոպոսի ընկերակցությամբ ներկա գտնվեց առաջին եւ երկրորդ համաշխարհային պատերազմներում զոհված անգլիացի զինվորներին նվիրված հոգեհանգստյան արարողությանը: Երկու Եկեղեցիների պետերը հատուկ աղոթք արեցին նաեւ 20-րդ դարի հայ նահատակների համար: Արարողությանը ներկա էին բազմահազար հավատացյալներ, պետական բարձրաստիճան եւ զինվորական պաշտոնյաներ:

Հոգեհանգստյան արարողության ավարտին՝ կեսօրվա ժամը 12-ին, Քենթրբերիի Մայր տաճարում Անգլիկան Եկեղեցու արքեպիսկոպոսը մատուցեց Սբ. Պատարագ, իսկ օրվա պատգամը տվեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Քարոզից առաջ Անգլիկան Եկեղեցու արքեպիսկոպոսը ողջունեց Ամենայն Հայոց կաթողիկոսի պատմական այցը Քենթրբերի: Նա ընդգծեց երկու Եկեղեցիների միջեւ գոյություն ունեցող սերտ եղբայրությունն ու գործակցությունը, մասնավորապես Վեհափառ Հայրապետի ներդրումը միջեկեղեցական էկումենիկ կյանքում: Ավարտելով խոսքը՝ արքեպիսկոպոսը Վեհափառ Հայրապետի կուրծքը զարդարեց Անգլիկան Եկեղեցու բարձրագույն պարգեւով՝ «Լամբեթի խաչ» շքանշանով: Այս պատվին Հայ Եկեղեցում արժանացել է նաեւ երջանկահիշատակ Վազգեն Ա կաթողիկոսը:



*Լոնդոնի հայկական Ս. Սարգիս եկեղեցու մուտքի մոտ*

Իր հերթին Վեհափառ Հայրապետը Անգլիկան արքեպիսկոպոսին շնորհեց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» առաջին կարգի շքանշանը: Պատասխան խոսքում Վեհափառը կարեւորեց երկու Եկեղեցիների միջեւ տիրող բարեկամական հարաբերությունները:

Օրվա երկրորդ կեսին Անգլիկան արքեպիսկոպոսը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպել էր պաշտոնական ճաշկերույթ:

## ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ Ս. ՍԱՐԳԻՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նոյեմբերի 10-ին՝ առավոտյան ժամը 11-ին, Նորին Սրբություն Գարեգին Ա կաթողիկոսը Քենթրբերիի արքեպիսկոպոսի ուղեկցությամբ այցելեց Լոնդոնի Սբ. Սարգիս հայկական եկեղեցի: Վեհափառ Հայրապետին եւ գերաշնորհ արքեպիսկոպոսին դիմավորեցին լոնդոնահայ համայնքի հավատացյալները՝ թեմի առաջնորդ Տ. Եղիշե արքեպս. Կիզիրյանի եւ եկեղեցու հովիվ Տ. Շնորհք քհ. Բաղդասարյանի գլխավորությամբ:

Կանոնական կարճ աղոթքից հետո ընթերցվեց Վեհափառի այցելության առթիվ կազմված Վեհափառ Հայրապետի ու Քենթրբերիի արքեպիսկոպոսի պաշտոնական հայտարարությունը, որը երկու Հայրապետները պաշտոնապես ստորագրեցին եկեղեցու ատյանի առջեւ:

Նույն օրը՝ երեկոյան, Ս. Սարգիս եկեղեցում «Հրաշափառ»-ի արարողությամբ սկսվեց Վեհափառ Հայրապետի հովվապետական այցելությունը լոնդոնահայ համայնք: Ներկա էին Քենսինգթընի քաղաքապետ տիար Էդուարդ Հեսը՝ իր տիկնոջ՝ Էլիզաբեթ Հեսի հետ, քույր Եկեղեցիների հոգեւորականներ, հայ համայնքի մտավորական եւ բարեսիրական կազմակերպությունների ներկայացուցիչներ, պաշտոնական այլ անձինք:

Ողջույնի խոսքով հանդես եկավ թեմի առաջնորդ Տ. Եղիշե արքեպս. Կիզիրյանը: Վեհափառ Հայրապետը անգլերենով ողջունեց հյուրերին, ապա ոգեշունչ խոսքով խանդավառեց ներկաներին:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՉԵՍՏՐԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

Երեքշաբթի՝ նոյեմբերի 11-ին, Վեհափառ Հայրապետը ուղեւորվեց Մանչեստր՝ տեղի հայ համայնքին տալու իր անդրանիկ հովվապետական այցելությունը: Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել տեղի Սբ. Երրորդություն Հայկական Առաքելական եկեղեցու հոգաբարձության ատենապետը՝ տիար Թադեոս Քուլիկյանը եւ մի խումբ ազգայիններ: Քիչ հետո Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց դեպի Սբ. Երրորդություն եկեղեցի: «Հրաշափառ»-ի արարողությունից հետո բարի գալստյան խոսքով հանդես եկավ թեմի առաջնորդ Տ. Եղիշե արքեպս. Կիզիրյանը, ապա ժողովրդին իր պատգամը փոխանցեց Վեհափառ Հայրապետը:



*Լորդերի պալատում*

Վեհափառ Հայրապետն իր ոգեշունչ խոսքով կոչ արեց բոլորին՝ կապվել հայրենիքի հետ, Սբ. Էջմիածին ուխտագնացությամբ հոգեւոր կյանքը առաջնորդել վերազարթոնքի:

Արարողությունից հետո, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ, որն ավարտվեց գեղարվեստական փոքրիկ մի հայտագրով: Վերջում ներկաներին իր պատգամը տվեց Ամենայն Հայոց կաթողիկոսը, որը երկլեզու ճառով բացառիկ խանդավառության մթնոլորտ ստեղծեց ներկա հավատացյալների մոտ՝ շեշտելով Հայաստանի եւ Սբ. Էջմիածնի հանդեպ հայ քրիստոնյաներից սպասվող ներդրումների անհրաժեշտությունը՝ մայր հայրենիքի եւ Հայոց Եկեղեցու վերազարթոնքի նպատակով: «Եկեղեցին պետք է վերածել շարժումի եւ հարկ է այլեւս փոխել անոր տրված քարացած հաստատության նկարագիրը: Պատմությունը ճամփորդություն մըն է, որուն մեջ բոլորս պետք է ըլլանք շարժման մղիչներ ու ստեղծագործող ոգեղեն ներկայություն»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

## ԱՅՑ ՀՀ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Նոյեմբերի 12-ին վերադառնալով Մանչեստրից՝ Վեհափառ Հայրապետն այցելեց Հայաստանի դեսպանատուն, ուր նրան դիմավորեց դեսպանատան աշխատակազմը՝ լիզոր հավատարմատար Նունե Սարգսյանի գլխավորությամբ: Կազմակերպված ընդունելությանը ներկա էին դեսպանատանը զորակցող բազմաթիվ ազգայիններ:

Նույն օրը՝ երեկոյան ժամը 8-ին, Լոնդոնի Սբ. Պետրոս հայկական եկեղեցում Վեհափառ Հայրապետը հանդիպեց լոնդոնահայ համայնքի ավելի քան 500 հավատացյալների հետ՝ տալով նրանց իր պատգամը: Վեհափառը հանգամանորեն անդրադարձավ հայրենիքի եւ Սբ. Էջմիածնի ներկա կացությանը՝ կոչ անելով ներկաներին գործուն մասնակցություն բերել հայրենակերտման սրբազան առաքելության մեջ:

## ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

Նոյեմբերի 13-ին Նորին Սրբություն Գարեգին Ա կաթողիկոսն այցելեց Անգլիայի խորհրդարան՝ Լորդերի պալատ, ուր հրավիրված էր նաեւ դասախոսելու «Ազգ, որը մերժեց մեռնել» թեմայով: Դասախոսության ընթացքում Վեհափառ Հայրապետը հարյուրից ավելի քաղաքական գործիչների ներկայությամբ խոսեց 20-րդ դարի հայ ժողովրդի պատմության, հատկապես վերանկախացած Հայաստանի եւ հայ ժողովրդի ստեղծագործ կյանքի մասին:

Վեհափառ Հայրապետը իր երախտագիտությունը հայտնեց լորդ Շենոնին եւ բարոնուհի Քոկսին, որոնք անցնող 10 տարիների ընթացքում սեր եւ նվիրում են ցուցաբերել Հայաստանի նկատմամբ:

Նույն օրը՝ երեկոյան, Վեհափառ Հայրապետը Սբ. Պետրոս հայկական եկեղեցում հանդիպեց լոնդոնահայ համայնքի նորընտիր եկեղեցական խորհրդի անդամների հետ /ատենապետն է Րաֆֆի Հովհաննիսյանը/, իր օրհնությունն ու հայրենիքին եւ Ս. Էջմիածնին ծառայելու պատգամը տվեց նորընտիր վարչությանը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նոյեմբերի 14-ին Վեհափառ Հայրապետը հանդիպումներ ունեցավ համայնքային կազմակերպությունների վարչությունների անդամների, ինչպես նաեւ լոնդոնահայ այլ ներկայացուցիչների հետ: Նույն օրը՝ երեկոյան, Լոնդոնի Հայ եկեղեցական խորհուրդը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպել էր հանդիսավոր պաշտոնական ճաշկերույթ՝ շուրջ երեք հարյուր ազգայինների մասնակցությամբ:

Նոյեմբերի 15-ի առավոտյան Վեհափառ Հայրապետն այցելեց Լոնդոնի հայ համայնքի շաբաթօրյա եւ կիրակնօրյա «Թահթայան» վարժարանները: Հայոց Հայրապետի օրհնությունները ստանալու էին եկել դպրոցների շուրջ 300 աշակերտներ, ուսուցիչներ, նաեւ գաղութի բոլոր երիտասարդական կազմակերպությունները:

Բացման եւ բարիգալստյան խոսք ասաց Շնորհք քհ. Բաղդասարյանը, որից հետո երկու վարժարանները միասնական գեղարվեստական հայտագրով ներկայացան Նորին Սրբությանը:

Վերջում աշակերտությանն ու հավաքված ամբողջ բազմությանը իր հայրական խորհուրդներն ու օրհնությունները բաշխեց Վեհափառ Հայրապետը՝ կարեւորելով դպրոցի, մշակույթի դերը հայ մատաղ սերնդի կյանքում:

Նոյեմբերի 16-ին՝ առավոտյան ժամը 10.30-ին, հայոց Սուրբ Պետրոս եկեղեցում մատուցվեց Սուրբ Պատարագ /պատարագիչ՝ Տ. Եղիշե արքեպս. Կիզիրյան/: Ներկա էին ավելի քան 2000 հավատացյալներ:

Նորին Սրբությունը «Հայր մեր»-ից առաջ քարոզեց հավատացյալ բազմությանը «Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր» (Մատթ., Զ, 11) բնաբանով՝ շեշտելով հոգեւոր հացով առատանալու կարեւորությունը:

Նոյեմբերի 17-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Մեծ Բրիտանիայում Հայաստանի Հանրապետության դեսպանատունը կազմակերպեց ճաշկերույթ՝ ազգային բարերար Վաչե Մանուկյանի հյուրընկալությամբ իր ընտանեկան հարկի տակ: Ներկա էին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությունից պարոն Հեներսոնը, պապական նվիրակ Պաբլո Բուենթեն, մի շարք դեսպանատների ավագ ներկայացուցիչներ, նաեւ Հայաստանի նախկին վարչապետ դոկտոր Արմեն Սարգսյանը:

Վեհափառ Հայրապետը գնահատեց բոլոր պետությունների ցուցաբերած աջակցությունը Հայաստանին:

Նոյեմբերի 21-ին ավարտելով իր այցելությունը Անգլիկան Եկեղեցուն եւ Անգլիայի Հայոց թեմին՝ Նորին Սրբություն Գարեգին Ա կաթողիկոսը վերադարձավ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*

# ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆՅԱՑ ԵՒ ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄԵՐՈՒՄ

Պատմական նոր ժամանակաշրջան է թեւակոխել Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին: Վերաբացվում են նախկինում բռնությամբ ու անիրավությամբ գոցված եկեղեցիների դռները, ծառայության կոչվում երիտասարդ եւ գործելու եռանդով լեցուն հայրդիներ: Այսպիսի ծառայասեր ու եկեղեցանվեր երիտասարդների ձեռնադրություն կատարվեց Սյունյաց եւ Գեղարքունյաց թեմերում՝ Տաթեւի Պողոս-Պետրոս եկեղեցում, Սյունյաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի եւ Գեղհովիտ գյուղի Թուխմանուկ մատրան մեջ՝ Գեղարքունյաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի ձեռամբ:

Ստորեւ ներկայացնում ենք նորընծա քահանաների համառոտ կենսագրությունները:

### Տ. ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
### (ավազանի անունը՝ Հայկ)

Ծնվել է 1970 թ. դեկտեմբերի 9-ին, Էջմիածին քաղաքում:

1987-1988 թվականներին սովորել եւ ավարտել է Էջմիածնի թիվ 2 միջնակարգ դպրոցը, ապա ընդունվել Երեւանի մեքենաշինական տեխնիկումի ավտոճանապարհային մեքենաներ եւ սարքավորումներ բաժինը: Մեկ տարի սովորելուց հետո ծառայել է խորհրդային բանակում:

Ծառայությունից հետո՝ 1991-ից, շարունակում է ուսումը եւ ավարտում այն:

1994 թվականից ծառայել է Ս. Հռիփսիմե վանքում որպես դպիր եւ կատարել լուսարարի պարտականություններ:

1997-ին Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ եպիսկոպոսի ձեռամբ ձեռնադրվել է սարկավագ: Նույն թվականի հոկտեմբերի 26-ին՝ Գյուտ Խաչի տոնին, Տաթեւի վանքում, ձեռամբ թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի, օծվել է քահանա եւ ծառայության նշանակվել Կապան քաղաքում:

### Տ. ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
### (ավազանի անունը՝ Արգիշտ)

Ծնվել է 1968 թվականի նոյեմբերի 4-ին, Երեւան քաղաքում՝ ծառայողի ընտանիքում:

Սովորել է Երեւան քաղաքի թիվ 174 միջնակարգ դպրոցում:

1987-89 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1992 թվականին ծառայության է անցել Երեւան քաղաքի Սուրբ Զորավոր Աստվածածին եկեղեցում:

1994 թվականի ապրիլ-հուլիս ամիսներին Երեւան քաղաքի «Մալաթիա» երկրապահ ջոկատի հետ մասնակցել է ԼՂՀ-ի ինքնապաշտպանությանը:

1994-ի դեկտեմբեր ամսին՝ Սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնին, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանի ձեռամբ, ստացել է ուրարակիր դպրի աստիճան:

1997 թվականի փետրվար ամսին տեղափոխվել է Սյունյաց թեմ: Նույն թվականի հոկտեմբերի 26-ին՝ Գյուտ Խաչի տոնին, Տաթեւի վանքում (Ս. Պողոս-Պետրոս եկեղեցի), Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի ձեռամբ, օծվել է քահանա:

Ծառայությունը շարունակելու է Սյունյաց թեմի Մեղրի քաղաքում:

### Տ. ԴԱՎԻԹ ՔԱՀԱՆԱ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ
### (ավազանի անունը՝ Գեւորգ)

Ծնվել է 1973 թ. հոկտեմբերի 3-ին, Վրաստանի Հանրապետության Նինոծմինդայի (Բոգդանովկայի) շրջանի Փոքր Արագյալ գյուղում:

1979 թ. ընդունվել է Փոքր Արագյալի ութամյա դպրոց:

1984 թ. ուսումը շարունակել է Բոգդանովկայի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1990 թ. ընդունվել է Հոգեւոր ճեմարան:

1996 թ. մայիսի 19-ին, ձեռամբ գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1996 թ. հունիսին ավարտել է Հոգեւոր ճեմարանի վեցամյա ուսումնական շրջանը եւ աշխատանքի նշանակվել Վեհարանում՝ որպես քարտուղար:

1997 թ. օգոստոսի 1-ից ծառայության է նշանակվել Գեղարքունյաց թեմում:

1997 թ. հոկտեմբերի 26-ին, Գեղարքունյաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի ձեռամբ, ձեռնադրվել է քահանա եւ նշանակվել Մարտունու շրջանում հոգեւոր հովիվ:

# «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑԸ ՍՏԵՓԱՆԱՎԱՆՈՒՄ

Հուրախություն ստեփանավանցիների՝ սեպտեմբերի առաջին կեսին ԱՄՆ-ի արեւմտյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի նախանձախնդիր հետեւողականությամբ կառուցված գեղեցկատես ու հարմարավետ դպրոցը Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի օրհնությամբ իր դռները բացեց քաղաքի մանկանց կրթելու համար:

Իսկ նոյեմբերի 15-ին ծնունդ առավ մի նոր դպրոց՝ Ս. Գրիգոր Լուսավորչի անվան կիրակնօրյա հոգեւոր դպրոցը, որ ծառայելու է ողջ քաղաքի երեխաներին:

Շատ կարեւոր է, որ դպրոցի կառույցը ունի նաեւ մասուռ, որը ոչ միայն ավելի գեղեցկացնում, արտաքին փայլ ու վայելչություն է բերում, այլեւ եկեղեցական տոներն ու ծեսերը պատշաճ կերպով կատարելու հնարավորություն է ստեղծում:

Երկու դպրոցների ուսուցիչների համագործակցությունը խոստումնալից է:

Ստեփանավանի հոգեւոր վերազարթոնքը տեսնելով՝ ակամա մտածում ես, որ այսուհետեւ ավելի մեծ նվիրումով պիտի «զրահավորվենք ու գոտեպնդվենք» մեր հայրերի լույս հավատքով՝ դառնալով նրանց արժանավոր որդիները, որ իրավամբ ժառանգեցինք մեզ ավանդ տրված աշխարհի ամենահին, բայց միշտ երիտասարդ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին:

*Բարսեղ աբեղա ՓԻԼԱՎՉՅԱՆ*
*Ստեփանավանի եւ Տաշիրի հոգեւոր տեսուչ*

# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԴՊՐԱՏՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ.Տ. Գարեգին Առաջինի Հայրապետական տնօրինությամբ Արագածոտնի թեմի կենտրոն Օշականում ստեղծվում է հայ քրիստոնեական մշակույթի մի նոր համազգային օջախ՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոց դպրատունը:

Այդ առթիվ Մայր Աթոռը կոչ է հղել հայ մտավորականությանը, բոլոր մշակութասեր անձանց եւ հաստատություններին՝ զորավիգ կանգնելու այս նոր նախաձեռնությանը եւ իրենց կարելիության սահմաններում օգնելու, օժանդակելու մշակութային այս նոր օջախի կառուցմանը:

Եւ ահա արձագանքը չուշացավ: Շատ շուտով Օշական ժամանեցին մի խումբ հայազգի գիտնականներ, մշակույթի եւ արվեստի ներկայացուցիչներ: Դիտելով ու ծանոթանալով նորաստեղծ դպրատան հնարավորություններին՝ նրանք կարիք զգացին մտքերի ավելի հանգամանալից փոխանակության: Եւ ահա՝ նոյեմբերի 18-ին, տեղի ունեցավ նրանց երկրորդ հանդիպումը, որը վերածվեց գործնական խորհրդակցության՝ նախաձեռնությամբ Արագածոտնի թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Նավասարդ եպս. Կճոյանի:



Խորհրդակցության ժամանակ, որին մասնակցում էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս Գ. Սարգսյանը, ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Վ. Բարխուդարյանը, Երեւանի համալսարանի ամբիոնի վարիչ, ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը, ժողովրդական նկարիչ, ակադեմիկոս Գ. Խանջյանը, պրոֆեսոր Պ. Հակոբյանը, Ազգային գրադարանի տնօրեն Գ. Տեր-Վարդանյանը, Մատենադարանի գիտաշխատող Ա. Մաթեւոսյանը, ճարտարապետ Ա. Դավայանը, ճշտվեց դպրատան ապագա աշխատանքների ծրագիրը, ստեղծվեց այդ աշխատանքները կարգավորող հանձնախումբ: Խորհրդակցությունների մասնակիցներին անհրաժեշտ տեղեկություններով ու պարզաբանումներով ապահովում էր դպրատան վարչատնօրեն Ալֆրեդ Շահնազարյանը:

Գործնական բնույթ կրող այս խորհրդակցությունն ընդունեց հայությանը ուղղված կոչ՝ մամուլում հրապարակելու համար:

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ՝ Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ի ՍՓՅՈՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ

Արձագանքելով Մայր Աթոռի կոչին՝ զորավիգ կանգնել Հայրապետական տնօրինմամբ Օշականում հաստատված Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատանը, Հայաստանի մի խումբ մտավորականներ այս տարվա նոյեմբերի 10-ին այցելեցին Արագածոտնի թեմի Ս. Մեսրոպ Մաշտոց առաջնորդանիստ եկեղեցի, որի տարածքում արդեն վերակառուցված եւ հիմնադրված է հայ մշակույթի մի նոր կենտրոն՝ դպրատուն, մեր քրիստոնյա հավատքի եւ բազմադարյան քաղաքակրթության կենտրոն:

Երախտագիտությամբ արժեւորելով Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա-ի այս ազգանվեր նախաձեռնությունը՝ մենք լիահույս ենք, որ Մեսրոպ Մաշտոց դպրատունը կդառնա հայ ժողովրդի կրոնաքաղաքական մաքառման հարուստ պատմությունը հետազոտող մի հաստատություն եւ մեծ մասամբ կհասնի եռամեծ Ս. Մեսրոպ Մաշտոցի հանդեպ մեր ժողովրդի 1600-ամյա պարտքը: Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատունը կարիք ունի ոչ միայն գրքերի, վավերագրերի, նյութական մշակույթի արժեքների եւ գեղարվեստական աշխատանքների նվիրատվության, այլեւ բարոյական սրտացավ աջակցության, որի շնորհիվ մեր մշակույթը մեկ առիթ եւս կունենա ինքնաբացահայտվելու, նորովի ներկայանալու հայության նորեկ սերունդներին եւ օտար հանրությանը:

Նորահաստատ դպրատան աշխատանքների կազմակերպման, նրա թանգարանային բաժնի եւ գիտական գրադարանի համալրման գործը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտություն է զգացվում ապահովելու մեր մտավորականության լայն շրջանակների, աշխարհասփյուռ հայության տարբեր հատվածների ու հայրենանպաստ կազմակերպությունների մասնակցությունը, որոնց դիմելով՝ մենք կոչ ենք անում արձագանքել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հորդորին, իրենց որդիական պարտքը կատարել մեր Սուրբ Առաքելական Եկեղեցու եւ հայ մշակույթի հանդեպ:

Փրկչի ծննդյան 2000 եւ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյա ու հայ գրերի ստեղծման 1600 ամյակի տարելիցներին նվիրված ծրագրերի շրջագծում դպրատունն ի զորու է եւ պետք է դառնա սրբազան կենտրոնատեղի: Ուրեմն առանց հապաղելու բերենք մեր նպաստը այս աստվածահաճո գործին, եւ Տերը թող լինի մեզ բոլորիս ուղեցույց եւ մարտակից:

*Նավասարդ եպս. Կճոյան, առաջնորդ Արագածոտնի թեմի*
*Գագիկ Սարգսյան, ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ*
*Վլադիմիր Բարխուդարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար*
*Լենդրուշ Խուրշուդյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ*
*Գրիգոր Խանջյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, նկարիչ*
*Պիոն Հակոբյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
*Արտաշես Մաթեւոսյան, ձեռագրագետ, պատմաբան (Մաշտոցի անվ. Մատենադարան)*
*Գեւորգ Տեր-Վարդանյան, պատմաբան, Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն*
*Ալֆրեդ Շահնազարյան, Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատան վարիչ-տնօրեն*
*Աշոտ Դավայան, ճարտարապետ*

# ՕՇԱԿԱՆՅԱՆ ՀԱՎԱՔԻ ՄԵԿ ԱՅԼ ԵՐԱՆԳԸ

Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատանը նոյեմբերի 18-ին Արագածոտնի թեմի առաջնորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի նախաձեռնությամբ հավաքվել էին մերօրյա կաճառականներ Գ. Սարգսյանը, Լ. Խուրշուդյանը, Ա. Շահնազարյանը, Գ. Խանջյանը, Վ. Բարխուդարյանը, Ա. Մաթեւոսյանը, Գ. Տեր-Վարդանյանը: Առաջնորդանիստ Օշականը հյուրընկալել էր մտավորականների մի փաղանգի, որպեսզի մեկ անգամ եւս միակամ ու միասիրտ սրբագրեն ու ճշգրտեն դպրատան գիտական, քարոզչական աշխատանքների շրջանակը՝ ոսկեդարից մինչեւ մեր օրերը: Թերեւս պատմությունն արձանագրի այդ օրվա հավաքը որպես հերթական գիտական ժողով, բայց հիշատակման արժանի մի արարողություն եւս տեղի ունեցավ այդ օրը, որ խորհուրդ եւ իմաստ ուներ իր մեջ:

Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մկրտվեց ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանը: Եւ պատահական չէր, որ սրբազան արարողությունից հետո կնքահայր՝ Վ. Բարխուդարյանի եւ Նավասարդ սրբազանի առաջարկած եւ ընդունված մկրտության անունով Լեւոն Խուրշուդյանը խոստովանեց իր վաստակին ու կոչմանը յուրահատուկ հակիրճությամբ. «Ես ազդվեցի: Մի գիրք եմ գրել՝ «Ազգային գաղափարախոսություն». կարծում եմ՝ այդ գիրքը նորից պիտի գրվի»: Պետք է ասել, որ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանն է նպաստել յոթ տասնամյակ ապրած մարդու վերածննդին: Դեռ որքան պապակ սրտեր պիտի ջերմանան սրբազան հոր հորդորներից եւ բռնեն այն ճանապարհը, որով անցավ վաստակած գիտնականը:

Ավարտվում է օրը: Մեծապատիվ հյուրերը հեռանում են՝ հարստացած օրվա խորհրդով, խանդավառված ու բարձր տրամադրությամբ: Իսկ Նավասարդ սրբազանը մնում է իր մեծ ու փոքր հոգսերի հետ: Նա գիտակցում է նախաձեռնած գործի՝ դպրատան կայացման դժվարությունները, որոնց հաղթահարումը ջանք, եռանդ ու համբերություն է պահանջում: Ժամանակ կանցնի, եւ թե Աստված կամենա, «դպրատունը կդառնա հայ ժողովրդի կրոնաքաղաքական մաքառման հարուստ պատմությունը հետազոտող մի հաստատություն եւ գեթ մասամբ կհասնի եռամեծ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի հանդեպ մեր ժողովրդի 1600-ամյա պարտքը», այնժամ տարիների հեռվից թերեւս այսօրվա խորհուրդն առավել իմաստավորվի:

Գիտնական այրերը, թեմական առաջնորդը, հյուրերը անշուշտ հավատում էին, թե գալիք լավ օրերի համար բարի մի գործի սկիզբ են դնում, որ պիտի օրհնի Աստված եւ թույլ չտա, որ սկարանա: Թող բազմապատկվեն ազգային նման հաստատությունները, որ մեր հոգեւոր գանձարաններն են դառնալու: Մեծն Մաշտոցի սրբալույս անձը, որ հանգչում է Օշականի հողում, կարծես ավետարանական հայտնի առակի խորհուրդն է կրկնում, թե ցորենի հատիկը, եթե չմեռնի հողի մեջ, չի բազմապատկվի:

*Սիլվա ՍՈՒՔԻԱՍՅԱՆ*

# ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

*(սկիզբը՝ «Քրիստոնեայ Հայաստան» թիվ 1-2, 4-5, 6, 11, 17)*

## ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

ԺԳ դարի վերջերին խաչակիրների պետությունների թուլացմանն ու վերացմանը զուգընթաց՝ Կիլիկիայի հայկական թագավորության շուրջ սեղմվող մահմեդական պետությունների օղակը ստիպում է կիլիկյան գահակալներին օգնություն որոնել Արեւմուտքում: Իսկ այդ օգնությունը Հռոմի կողմից, որպես կանոն, շաղկապվում էր եկեղեցական-դավանաբանական խնդրի հետ: Հռոմի պապի պահանջով եւ հաճախ Կիլիկյան թագավորների ճնշմամբ տեղի են ունենում մի քանի եկեղեցական ժողովներ, որոնք ընդունում են Արեւմուտքի պահանջները, սակայն վերջնական արդյունքում այդ զիջումները ոչ մի օգուտ չեն բերում Կիլիկիային, ընդհակառակը, հարուցում են շրջակա մահմեդական պետությունների թշնամությունը:

Կիլիկյան արքունիքի լատինականացման ակնառու օրինակ է Հեթում Բ թագավորը, որը Կաթոլիկ Եկեղեցու Ֆրանցիսկյան միաբանության անդամ էր, այդ պատճառով հրաժարվեց թագ կրելուց եւ ամուսնանալուց, ի վերջո կրոնավորի սքեմ հագավ՝ ստանալով Եղբայր Հովհաննես անունը: 1289թ. նա անհիմն մեղադրանքներով աթոռանկ արեց ու ձերբակալեց Կոստանդին Բ Կատուկեցի կաթողիկոսին (1286-1289), որը համամիտ չէր նույն թվականին Հռոմի պապից ստացված նամակին:

Ողբերգական ճակատագիր ունեցավ նոր ընտրված Ստեփանոս Դ Հռոմկլայեցին (1290-1292), որի կաթողիկոսությունն ավարտվեց եգիպտացիների արշավանքի հետեւանքով Հռոմկլայի անկումով: Հեթում Բ-ն որեւէ օգնություն չցուցաբերեց շուրջ մեկ ամիս դիմադրող պաշարված ամրոցին, որի գրավումով վերացավ Հռոմկլայի կաթողիկոսարանը: Ավերվեցին աթոռանիստ ամրոցի Ս. Գրիգոր, Ս. Աստվածածին, Ս. Փրկիչ եկեղեցիները, կողոպտվեցին սրբությունները, Ստեփանոս կաթողիկոսը գերվեց 12 եպիսկոպոսների հետ, տարվեց Եգիպտոս եւ իր մահկանացուն կնքեց մեկ տարի անց Կահիրեում:

Հաջորդ կաթողիկոսը, որը հաստատվեց Սիս մայրաքաղաքում, Հեթումի գաղափարակից Գրիգոր Է Անավարզեցին (1293-1307) կրոնածիսական մի շարք փոփոխություններ է կատարում լատինական հետեւողությամբ, որով առաջացնում է Արեւելյան Հայաստանի վարդապետների դժգոհությունը: Համառորեն իր միարարական ծրագիրը հետապնդող Հեթումը, որը գահը զիջել է եղբորորդուն՝ տասնութամյա Լեւոն Դ-ին, Անավարզեցու մահից հետո՝ 1307թ., Սսում մի ժողով է նախաձեռնում, որին մասնակցում են առավելապես Կիլիկիայի եպիսկոպոսներն ու իշխանները: Ժողովն ընդունում է Հայ Եկեղեցու դավանաբանությանը խորթ որոշումներ (ընդունել 7 տիեզերական ժողովները, Քրիստոսի մեջ խոստովանել երկու բնություն, երկու կամք, երկու ներգործություն, Տերունական տոները նշել ըստ Հռոմի տոնացույցի եւ այլն): Նույն ժողովում կաթողիկոս է ընտրվում Կոստանդին Դ Կեսարացին (1307-1322), որը ժողովի որոշումներն իրականացնելու հանձնառուն է դառնում: Սսի այս ժողովի որոշումները դժգոհություն են առաջացնում հենց Կիլիկիայում, բայց առավել՝ Հայաստանում: Կոստանդին Կեսարացին մի նոր ժողով է գումարում 1316թ. Ադանայում, ուր մեկ անգամ եւս հաստատում է Սսի ժողովի որոշումները:

Այսպիսով, եկեղեցական սկզբունքները ստորադասվում են քաղաքական նկատառումներին, սակայն սպասված արդյունքը չի ստացվում: Կիլիկյան հաջորդ գահակալները՝ Օշինը, Լեւոն Ե-ն եւ մյուսները (հատկապես կաթոլիկ Լուսինյանները) շարունակում են գործել Արեւմուտքի օգնության ակնկալությամբ, սակայն Հռոմի հետ մերձեցման հետեւանքով ոչ միայն դրացիների աչքում դառնում են նոր խաչակրության հրահրիչներ, այլեւ զրկվում սեփական ժողովրդի աջակցությունից: Մյուս կողմից Հռոմն էլ, խոստացած օգնությունը տալ չկարողանալով, զանազան պատրվակներ է ստեղծում, որի վկայությունն է Բենեդիկտոս ԺԲ պապի ժամանակ մոլեռանդ միարարների ձեռքով կազմված Հայոց Եկեղեցու կարծեցյալ մոլորություններին վերաբերող գրությունը, ուր այդ «մոլորությունների» թիվը հասցված է 117-ի: Այդ գրությունը քննեց եւ դրա վերաբերյալ բացատրական ու հակաճառական հիմնավոր պատասխան կազմեց Սսի 1343թ. ժողովը, որը հրավիրվել էր կաթողիկոս Մխիթար Ա Գառնեցու (1341-1355) կողմից:

Կիլիկեցիների համար աստիճանաբար պարզ դարձավ, որ Արեւմուտքի օգնությունը խաբկանք է: Այս պայմաններում Մեսրոպ Ա Արտազեցի կաթողիկոսը (1359-1372) 1361թ. մի նոր ժողով գումարեց Սսում, որի արդյունքում որոշվեց վերացնել նախորդ շրջանի բոլոր «նորամուծությունները»: Սակայն Կիլիկիայի հայկական պետությունն արդեն հասել էր կործանման եզրին: 1375-ին գրավվեց Սիս մայրաքաղաքը եւ Կիլիկիայի վերջին թագավոր Լեւոն Զ-ն գերի տարվեց Եգիպտոս:

Պետականության անկումից հետո կաթողիկոսական Աթոռը շարունակեց մնալ Սսում, սակայն Կիլիկիայի հայության զգալի մասի արտագաղթի եւ երկրի մահմեդական կառավարիչների կամայականությունների հետեւանքով նրա դերը խիստ թուլացավ:

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ 1441թ.

ԺԵ դարի սկզբներին ակնհայտ դարձավ, որ Սսում գտնվող կաթողիկոսական Աթոռը չի կարող համահայկական նշանակություն ունենալ: 1409թ. Սսի եւ Աղթամարի կաթողիկոսությունների միջեւ բնականոն հարաբերություններ հաստատվեցին: Սակայն շուտով Սսի աթոռակալները հանգամանքների բերումով եւ մասամբ իրենց վարքի պատճառով հեղինակազրկվեցին:

Հայաստանում հասունացավ այն գիտակցությունը, որ կաթողիկոսական Աթոռը պետք է վերահաստատվի իր նախնական տեղում՝ Վաղարշապատի Ս. Էջմիածնում: Հայ Եկեղեցու բազմերախտ ու հեռատես գործիչների՝ Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի եւ եռամեծ րաբունապետ Գրիգոր Տաթեւացու կողմից դեռ շատ ավելի վաղ արտահայտած այս գաղափարն իրականացավ 1441թ.՝ հենց Տաթեւացու սաների՝ Թովմա Մեծոփեցու, Հովհաննես Հերմոնացու եւ այլոց նախաձեռնությամբ: Դա իրոք մի կարեւորագույն ու շրջադարձային հանգրվան դարձավ Հայոց Եկեղեցու համար:

Այդ տարիներին Կիլիկիայում գահակալում էր Գրիգոր Թ Մուսաբեկյանը (1439-1441): Ենթադրվում է, որ Աթոռի փոխադրությունը նախաձեռնողները նախապես դիմել են նրան՝ Էջմիածնում հաստատվելու առաջարկով, բայց մերժում են ստացել:

1441թ. Ազգային-եկեղեցական ժողովի ավելի քան 300 մասնակիցները նախ հավաքվեցին Երեւանում, ապա տեղի մահմեդական կուսակալի համաձայնությամբ մեծ թափորով ուղեւորվեցին Վաղարշապատ: Ժողովը բացվեց Համբարձման տոնի օրը: Առաջադրվեցին կաթողիկոսի մի քանի թեկնածուներ: Դժվարին քննարկումից հետո ի վերջո ընտրությունը կանգ առավ որեւէ խմբակցության հետ կապ չունեցող չեզոք թեկնածուի՝ Կիրակոս Վիրապեցու վրա, որն այսպիսով դարձավ Ս. Էջմիածնում վերահաստատված Աթոռի առաջին գահակալը:

Աթոռի փոխադրությամբ եւ Վիրապեցու ընտրությամբ բարենպաստ հեռանկար բացվեց կաթողիկոսական Աթոռի համար: Նախ ավարտվեց Աթոռի դեգերումների երկարատեւ շրջանը. 1046թ. Բյուզանդիայի պարտադրմամբ թողնելով Հայոց բնաշխարհի սահմանները՝ ահա կրկին հաստատվում է իր նախնական վայրում: Մյուս կողմից՝ Միջերկրականի ափերից հեռացած Հայոց կաթողիկոսությունն ազատվում էր Կիլիկյան շրջանի՝ դավանաբանական ու ծիսական հարցերում Հռոմին կատարված զիջումների բեռից, վերագտնում իր ինքնուրույնությունը եւ ամուր կերպով կանգնում նախնյաց ավանդների վրա:

Նորընծա կաթողիկոսի առաջին գործերից մեկը եղավ սուրբ մեռոնի օրհնությունն ու դրա բաժանումը Հայաստանի եկեղեցիներին: Ապա հայրապետը հատուկ կոնդակով չեղյալ համարեց նախընթաց տասնամյակներին Հայոց Եկեղեցու տարբեր հատվածների միմյանց հասցեին արված նզովքները, սիրո ու միաբանության կոչ ուղղեց բոլոր թեմերին ու եկեղեցիներին: Կիրակոս Վիրապեցին նորոգեց Էջմիածնի տաճարը, բարեկարգեց վանական համալիրը, իսկ րաբունապետ ու մատենագիր Թովմա Մեծոփեցին վերստին շունչ հաղորդեց հայաստանյան առաջին դպրոցի բնօրրանի նվաղած մշակութային կյանքին:

Թվում էր՝ ամեն ինչ բնականոն հունի մեջ էր մտնում, սակայն, ցավոք, երկու տարի անց տարբեր խմբակցությունների հին թշնամությունները ու անմիաբանության խոտելի սովորույթը կատարեցին իրենց գործը, եւ 1443 թ. Կիրակոս Վիրապեցին աթոռանկ արվեց: Կաթողիկոս հռչակվեց Գրիգոր Ժ Ջալալբեկյանցը (1443-1465), եւ համազգային միասնության հրաշալի գործընթացը մեծապես վնասվեց: Այս տխուր իրողության մանրամասներին չանդրադառնալով՝ նշենք, որ անկախ ամեն ինչից, պատմական հետագա ելեւէջներից՝ 1441 թ. կաթողիկոսական Աթոռի փոխադրությունն Էջմիածին, իիրավի, ճակատագրական եղավ հայ ժողովրդի համար: Դա ոչ միայն հոգեւոր-եկեղեցական, այլեւ քաղաքական խոշոր իրադարձություն էր, որի շնորհիվ հայությունը համոզվեց, որ անկախ հայրենիքի քաղաքական կացությունից, փրկության ու գոյատեւման գրավականը հենց հայրենի հողում՝ Լուսավորչահիմն Ս. Էջմիածնի հովանու ներքո ապրելն է:

Գրիգոր Ջալալբեկյանցի ժամանակ՝ 1461-ին, երկրի մահմեդական իշխանավորների օգնությամբ շուրջ մեկ տարով Ս. Էջմիածնի Աթոռը գրավում է Աղթամարի կաթողիկոս Զաքարիա Գ Աղթամարցին, սակայն ինչ միջոցով, որ նա Վաղարշապատ էր եկել, նույն կերպ էլ հեռացվեց Գրիգոր կաթողիկոսի ու նրա աջակիցների կողմից: Վերջիններիս փառասիրությանը հագուրդ տալու համար Գրիգոր Ջալալբեկյանցն աթոռակից կաթողիկոս ձեռնադրեց նրանցից երկուսին՝ Արիստակես Բ-ին եւ Սարգիս Բ-ին: Դրանից հետո՝ բավական ժամանակ, սովորական երեւույթ դարձավ Էջմիածնում մեկից ավելի կաթողիկոսների ներկայությունը, որն իհարկե դրական երեւույթ չէր: Սակայն այդ կացությունն այն առավելությունն ուներ, որ կաթողիկոսի մահից հետո անմիջապես նրան փոխարինում էր աթոռակիցը, եւ փաստորեն կարիք չէր զգացվում նոր ընտրական ժողով գումարելու, մի բան, որ այնքան էլ դյուրին չէր երկրի քաղաքական անկայունության եւ մահմեդական իշխանությունների միջամտության պայմաններում: Այս նույն պատճառներով Էջմիածնի Աթոռը տեւական ժամանակ անշուք վիճակում էր գտնվում: Մի կողմից՝ օտար իշխողների կամայականությունների, ժողովրդի թշվառության, մյուս կողմից՝ եկեղեցական գործունյա ու ձեռներեց գործիչների բացակայության հետեւանքով Էջմիածնի կաթողիկոսությունը չափազանց ծանր ժամանակաշրջան էր ապրում: Այս կացությունը, փոքր բացառություններով (ինչպես, օրինակ, հայ տպագրության ծավալմանը հետամուտ Միքայել Սեբաստացու կաթողիկոսության շրջանը՝ ԺԶ դ. 60-70-ական թթ.), շարունակվեց մինչեւ ԺԷ դար՝ Մովսես Գ Տաթեւացու (1629-1632) գահակալությունը:

## ԿԻԼԻԿՅԱՆ ԱԹՈՌԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ, ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վաղարշապատում Կիրակոս Վիրապեցու Աթոռից հեռացվելը առիթ տվեց կիլիկեցիներին վերականգնելու Սսի կաթողիկոսական Աթոռը: 1446թ. Կարապետ եպիսկոպոս Եվդոկացու կաթողիկոս ձեռնադրվելով շարունակվեց Սսի կաթողիկոսությունը (այժմ՝ կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիո), որը սկզբում մերժում էր Ս. Էջմիածնի գերակայությունը, սակայն ժամանակի ընթացքում հակասությունները հարթվեցին, եւ փոխհարաբերությունները կարգավորվեցին:

Կիլիկիայի երկրամասը տեւականորեն գտնվում էր քաղաքական անկայուն պայմաններում, անգամ ԺԶ դարի սկզբներին Օսմանյան տերության կազմում ընդգրկվելուց հետո էլ այդ վիճակը շարունակվեց մինչեւ ԺԹ դարի կեսերը: Դրանից մեծապես տուժում էր տեղի հայությունն ու Հայ Եկեղեցին: Այս է պատճառը, որ Սսի կաթողիկոսները երբեմն երկրորդ աթոռանիստ են դարձրել Ադանան եւ Հալեպը: ԺԷ դարի 30-ական թվականներից սկսած՝ շուրջ մեկ ու կես դար Կիլիկիայում աթոռակալել են Աջապահյան տոհմի ներկայացուցիչները, որոնք կարողացել են պատշաճ կերպով կարգավորել թեմական, վարչական, շինարարական, կրթական, հոգեւոր-մշակութային հարցերը:

Երուսաղեմում հայերը եկեղեցիներ են կառուցել դեռեւս Արշակունիների ժամանակ՝ Դ դարից սկսած: Հայոց բոլոր նշանավոր նախարարական տներն այստեղ վանքեր ու եկեղեցիներ են հիմնել: Բյուզանդիայում քաղկեդոնականության տարածման հետեւանքով Երուսաղեմի հայկական եկեղեցիներն առանձնացան հունական եկեղեցիներից եւ սկսեցին գործել իրենց հոգեւոր առաջնորդ եպիսկոպոսի ղեկավարությամբ: Ըստ պատմիչ Ջեֆի ալ Դինի՝ արաբների կողմից Երուսաղեմի գրավումից հետո (636թ.) հայերը քաղաքում կրոնական ազատություն են վայելել՝ շնորհիվ Աբրահամ պատրիարքի՝ անձամբ Մուհամմեդից ստացած (626թ.) եւ Գրիգոր պատրիարք Ուռհայեցու՝ Օմար խալիֆից ստացած (636թ.) հաստատագրերի: Նման մի հաստատագիր էլ Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը ստացել է 1187թ. Սալահեդդինից, որն այդ թվականին գրավել էր քաղաքը խաչակիրների ձեռքից:

1307թ. Սսի ժողովի որոշումներից եւ Կոստանդին Կեսարացի կաթողիկոսի լատինասեր ընթացքից հիասթափված Սարգիս պատրիարքը, 1311թ. եգիպտական սուլթանից համապատասխան հրովարտակ ձեռք բերելով, Երուսաղեմի Հայոց պատրիարքությունն անջատում է Սսի կաթողիկոսական Աթոռից: Օսմանյան շրջանում Երուսաղեմի պատրիարքությունը գործում է Կ. Պոլսի պատրիարքության ավագությամբ:

Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը (Պատրիարքություն հայոց Թուրքիո) հիմնվել է 1461թ. սուլթան Մուհամմեդ Բ-ի հրովարտակով: Առաջին պատրիարքն է եղել Հովակիմ եպիսկոպոսը, որն աթոռակալել է Սամաթիայի Ս. Գեւորգ եկեղեցում: 1644-ից աթոռանիստը տեղափոխվել է Գումգափու, ուր գտնվում է մինչեւ այժմ (առաջնորդանիստ եկեղեցին է Ս. Աստվածածինը): Պոլսի Հայոց պատրիարքներն օժտված էին ինչպես ընդարձակ եկեղեցական, այնպես էլ աշխարհական մասնակի իրավունքներով, քանի որ տնօրինում էին թուրքական տերության ողջ տարածքում բնակվող մեծաթիվ հայ համայնքների ներքին կյանքը: Օսմանյան կայսրության ընդարձակմանն ու զորացմանը զուգահեռ՝ մեծանում էր նաեւ պատրիարքության դերն ու հեղինակությունը, քանի որ սուլթանական վարչակարգը որպես իր պետության տարածքում բնակվող հայության պաշտոնական ներկայացուցիչ էր ճանաչում Պոլսի պատրիարքին: Ըստ այդմ՝ Սսի եւ Աղթամարի կաթողիկոսությունները, Երուսաղեմի պատրիարքությունը Պոլսի պատրիարքին էին զիջում առաջնությունը: Որոշ շրջանում փորձ է արվում ինքնիշխան դիրք գրավել նաեւ Ս. Էջմիածնի նկատմամբ (որը գտնվում էր Պարսկաստանի տիրապետության տակ), սակայն այն չի իրականանում, եւ Պոլսի պատրիարքությունն օրինաչափորեն ընդունում է Մայր Աթոռի գերակայությունը: Պատրիարքներից մի քանիսը ժամանակին ընտրվել են Ամենայն Հայոց կաթողիկոս:

Արեւելյան Հայաստանի՝ Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո Թուրքական կառավարության աչքում Հայոց պատրիարքարանն ավելի մեծ կարեւորություն է ստանում: 1860թ. կազմված եւ 1863թ. իշխանության կողմից վավերացված «Ազգային Սահմանադրությունը» Պոլսում եկեղեցական վարչության գործունեությանն ավելի կանոնավոր բնույթ է հաղորդում:

Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը կարեւոր ավանդ է ներդրել հայ ժողովրդի կրթական-մշակութային կյանքի զարգացման ասպարեզում, միաժամանակ նշանակալից դեր կատարել ազգային-ազատագրական պայքարի շրջանում՝ մի կողմից նպաստելով համազգային իղձերի իրականացմանը, մյուս կողմից՝ դիվանագիտական միջոցներով փորձելով ժողովրդին զերծ պահել արյունահեղությունից: Այս առումով հատկանշական է հատկապես Ներսես Վարժապետյանի (1874-1884) եւ Մաղաքիա Օրմանյանի (1896-1907) պատրիարքների գործունեությունը:

*Կ. Մ.*

